


Հին ճարտարութեան եւ արուեստի նմոյշ մը կը ներկայացնէ:

Այս խաչաձեւ բանուածքն՝ ժամանակաւ հին շուրջառի մը վըայ հաստատուած է եղեր, բայց կ'երևի թէ այն շուրջառն փճանալով, վերջին ժամանակներու մէջ նոր եւ սեւ շուրջառի մը վըայ հաստատած են, որ այժմ կը գործածուի յիշեալ եկեղեցւոյն մէջ յԱւագ շարաթ խաւարման գիշերի արարողութեան ատեն:

Վերջին փոփոխութեան ատեն բանուածքի վերի մասէն երկու հարիւրորդամէդրի չափ կտոր մը՝ թուի թէ շատ հինցած ըլլալուն՝ մկրատուած է սող մը գրով:

Բանուածքն ունի այժմ 119 հարիւրորդամէդր երկայնութիւն, 8,5 հրդմ. լայնութիւն, իսկ թեւը 73 հարիւրորդամէդր է:

Արձանագրութենէն կը տեսնենք՝ թէ նախկին հին շուրջառն նուիրուած է 1652 թուականին, — ինչպէս ըսինք — Կեաբրիոյ Ս.



Աստուածածնի եկեղեցւոյն, Շարք օղւո- խօծ- Գրեթորի կողմանէ: Այս մակնուամբ այժմ Կեաբրիոյ մէջ ընտանիք մը չի յիշատակուիր, թէ-

եւ շատ հետաքրքրութիւն ունեցայ ասոր մտանուամբ եւ կամ մակնուամբ ընտանիք մը գտնելու համար:

Յիշատակարանը հետեւեալն է. Յիշարդէ է շուրջառն Մանրեի Շարք օղւո- խօծայ Գրեթորին է գործն սողը Աստուածածնի եկեղեցին Բիւն. ՌՃԱ:

Տ. Վ. Գ.

ԱՅԼԵՐԱՅԼԻՔ

ՄԱՆՐԵԱՅԻՔ

Երկայնայ տաստաղ:

Արուեստագիտական թերթի մը համաձայն՝ երկայնայ առաստաղներն ի Հիւսիսային Ամերիկա օր քան զօր կը տարածուին, որ ոչ թէ սենեկաց, այլ եւ եկեղեցիներու, թէ ատորոններու, պանդոկներու եւ ամէն տեսակ հրապարակական շինուածոց համար ալ կը գործածուին: Երկայնայ առաստաղին առաւելութիւնն եռապատիկ է. այսինքն՝ մաքրութիւն, երկար տեւականութիւն եւ հնչողականութիւն (acoustique): Բաց աստի այսպիսի առաստաղներու՝ դոյզն ծախիք արուեստական եւ անհաստատ զարդեր ալ կրնան տրուիլ: Ի Նիւ-Եորք, ի Պալմիտուր եւ ուրիշ մեծամեծ քաղաքաց մէջ արդէն հազարաւոր երկայնայ առաստաղներով տներ կան, եւ ասոնց մեծագոյն մասն իրենց պատկերներովը, զարդերովը, այլեւայլ վայելուչ նկարներովն սենեկաց մի միակ ճշմարիտ զարդերն են: Առաստաղներն առանձին առանձին կապակցեալ եւ շատ թեթեւ թիթեղներով կազմուած են եւ կ'երևայ թէ մերձաւոր ժամանակներ այսպիսի թիթեղներ որմոց զարդերու ալ պիտի գործածուին:

Առանց պայտի:

Մօտերս յԱմերիկա փորձեր եղան թէ արդեօք ձիերն առանց պայտի եւ առանց իրենց սմբակը փնասուելու կրնան երկայն ճամբայ ընել: Բազմաթիւ ձիաւոր պաշտօնակալք 900 քիլմդր. ճամբայ ըրին, եւ ձիերն առանց դոյզն իսկ փնասու ետ դարձան: Ձիերն ոչ կը կաղային եւ ոչ ալ ճամբան պայտահարելու պէտք կար, թէպէտ խճաքարերն ոչ սակաւ ցաւ կը պատճառէին: Թնդանօթածիգ զօրաց գունդ մը պայտերը հանուած ձիերով 500 քիլմդրէ աւելի